ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Հարցազրույց Վանաձորի պետական համալսարանի պրոռեկտոր Արեն ՍԱՆԹՈՅԱՆԻ հետ

Հրաժիկ ԽԱՉԱՏՐՅԱՆ

- Պարոն Սանթոյան, հայտնի է, որ այս օրերին Ձեր Արցախ գալու նպատակը Արցախի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և հայ գրականություն բաժնի պետական ավարտական ճնշություններն ընդունելն է: Որոնց ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի պետական ավարտական ճնշությունների հանձնաժողովի նախագահ՝ ի՞նչ կարող եք ասել: Համեմատե՞լ եք, արդյոք, Արցախի պետական համալսարանի և Վանաձորի պետական համալսարանի շրջանավարտների գիտելիքները:

- Ճիշտն ասած, եթե համեմատենք Արցախի պետական համալսարանի շրջանավարտների գիտելիքները Վանաձորի պետական համալսարանի շրջանավարտների գիտելիքների հետ՝ զգալի տարբերություն չենք առանձնացրի: Մենք կարող ենք այս երկու համալսարանների շրջանավարտներին համեմատել արտասահմանյան բուհերի շրջանավարտների հետ և ասել, որ մենք ունենք հիանալի գիտելիքներով շրջանավարտներ: Այնպես չէ, որ միայն արտասահմանյան բուհերի շրջանավարտները կարող են ունենալ հարուստ գիտելիքներ: Երեկ, օրինակ, ես հիացա ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի երկու շրջանավարտի դասախոսություններով: Թեմաներից մեկը լեզվաբանությունից էր, մյուսը՝ գրականությունից: Նրանք ցուցաբերեցին բարձր մակարդակ, բերեցին շատ տեղին օրինակներ: Ես իմացա, որ այդ ուսանողները նախանշված թեմաներով հանդես էին եկել նաև տարբեր գիտաժողովներում: Նրանք թեմաները պատշաճ կերպով ներկայացրին հնչող հանձնաժողովին:

- Ձեր հոր՝ Կիրովականի մանկավարժական ինստիտուտի նախկին պրոռեկտոր Մելս Սանթոյանի դերը Ստեփանակերտում Կիրովականի մանկավարժական ինստիտուտի բաժանմունքի ստեղծման գործում անուրանալի է: Ի՞նչ եք հիշում այդ մասին:

- Ես տեղյակ եմ, որ դեռևս 1989թ., երբ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի որոշմամբ փակվեց Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը, Կիրովականի մանկավարժական ինստիտուտի կոլեկտիվը, ռեկտոր Ռ.Եղոյանի գլխավորությամբ, իր հովանու տակ վերցրեց Ստեփանակերտի մանկավարժականի ուսանողությանը և դասախոսական կազմին: Հայաստանի հյուսիսային շրջաններում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժը հնարավորություն չտվեց Ստեփանակերտի մանկավարժական կոլեկտիվին երկար մնալ Կիրովականում, և անհրաժեշտություն առաջացավ Ստեփանակերտում ստեղծել Կիրովականի մանկավարժական ինստիտուտի բաժանմունք: Գիտեմ, որ հայրս էլ ուներ մասնակցություն այդ բաժանմունքի ստեղծման աշխատանքներին, և դա պատահական չէր, որովհետև նա առանձնակի ջերմությամբ ու սիրով էր վերաբերում Արցախի ժողովրդին:

- Վերջին տասը տարիների ընթացքում, ուսումնական տարին սկսելու նախօրյակին, Վանաձորի պետական համալսարանի ռեկտոր, դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Խաչատրյանի կողմից իրականացվում է Արցախի Հադրութի շրջանի Տումի գյուղի և Մարտունու շրջանի ճարտար խաղաքի դպրոցների առաջին դասարանցիներին նվերներ, պայուսակներ, գրենական պիտույքներ տրամադրելու աշխատանքը: Արդյո՞ք այդ գործընթացը շարունակական կլինի:

- Այո, վերջին 10 տարիներին մեր համալսարանի ռեկտոր Գուրգեն Խաչատրյանի նախաձեռնությամբ մենք հովանավորում ենք Ճարտարի մի խանի դպրոցների և Տումի գյուղի դպրոցին: Ինչպես Դուք արդեն նշեցիք, աջակցում ենք գրենական պիտույքներով, ուսումնական գույքով, լաբորատոր պարագաներով և այլն: Այս գործընթացն անպայման շարունակական բնույթ կունենա: Եվ, ընդհանրապես, ժամանակի ընթացքում Արցախին սատարելու մեր տարբերակներն ավելի բազմազանները կդառնան:

- Ինչո՞վ է պայմանավորված այն հանգամանքը, որ պրոֆեսոր Խաչատրյանը Արցախից ընտրել է Տումին և Ճարտարը:

- Տումին, ճիշտն ասած, իմ գիտական ղեկավարի՝ պրոֆեսոր Սերգեյ Աբրահամյանի ծննդավայրն է, և դպրոցը կրում է նրա անունը: Ս. Աբրահամյանը եղել է իմ ատենախոսության գիտական ղեկավարը և մեծ դեր է ունեցել իմ կյանքում: Իսկ Ճարտարի դպրոցներն ընտրել է պրոֆեսոր Գ. Խաչատրյանը: Եվ այն պայմանավորված է Ճարտարի միջնակարգ դպրոցի շրջանավարտ, ԱրՊՀ-ի հիմնադիր, դոկտոր, պրոֆեսոր Արտաս Ավանեսյանի հետ նրանց ջերմ գործընկերային հարաբերություններով: Ի դեպ, ավելորդ չեմ համարում նշել, որ իմ այս այցի ընթացքում Գ. Խաչատրյանը Ճարտարի ավագ դպրոցին է փոխանցել մեկ մանրադիտակ:

- Մայիսը մեզ համար հաղթանակների ամիս է: Ի՞նչ կցանկանայիք մաղթել Արցախի ժողովրդին այդ կապակցությամբ:

- Ամեն Արցախ գալով ես հիանում եմ այստեղ կատարվող բարեփոխումներով՝ մասնավորապես Ստեփանակերտում և Շուշիում իրականացվող աշխատանքներով: Ես առիթը բաց չեմ թողնում ամեն անգամ գալ Արցախ, շփվել արցախցիների հետ և հիանալ նրանց ձեռքբերումներով: Ուզացած չեմ համարում միանալ բոլոր այն շնորհավորանքներին ու բարեմաղթանքներին, որ հնչել են Երասոնի կապակցությամբ: Արցախցիներին մաղթում եմ հավատ և ոգու բարձր կայունություն: Արցախի գոյությունն ապահովում է հայության գոյությունը: Ես մարգարեական եմ համարում Մոնթե Մելիոնյանի խոսքը. «Եթե կորցնենք Արցախը, մենք կփակենք հայ ժողովրդի պատմության վերջին էջը»:

■